

ՍԱՂՄՈՍ 41

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Սաղմոսերգուն հիվանդության մեջ բողոքում է թշնամիներից և սուտ ընկերներից	Աստվածահանո մարդու օրհնությունը և տառապանքը	Աղոթք հիվանդությունից բժշկվելու համար	Աղոթք հիվանդության մեջ	Լքված տառապյալի աղոթքը
<u>MT ներածություն</u> «Գլխավոր երաժշտին. Դավթի սաղմոսը»				
41:1-3	41:1-3	41:1-3	41:1-3	41:1-3
41:4-9	41:4-6 41:7-9	41:4-10	41:4-9	41:4-9
41:10-12	41:10-12	41:11-12	41:10-13	41:10-12
41:13	41:13	41:13		41:13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 41:1-3</p> <p>¹Երանի՛ նրան, որ աղքատի մասին հոգ է տանում: Չար օրում ՏԵՐԸ փրկելու է նրան:</p> <p>²ՏԵՐԸ պահելու ու պահանելու է նրան . Օրհնված է լինելու երկրի վրա . Դու նրան թշնամիների կամքին չես մատնելու:</p> <p>³ՏԵՐԸ նրան ուժ կտա տկարության մահճում . Դու նրա ամբողջ անկողինը կվերափոխես հիվանդության ժամանակ:</p>
--

41:1-3 Այս առաջին պարբերությունը նկարագրում է այն անձի օրհնությունը (BDB 80, տես՝ Սաղմ. 1:1, տես՝ Հատուկ Թեմա. Օրհնություն [ՀԿ]), որը հնազանդվում է Մովսեսի Օրենքին, որը պահանջում է Իսրայելից կարիքավորների հանդեպ լինել բարեհամբույր, օգնող և ուշադիր (BDB 195, տես՝ Ելից 23, Ղևտ. 14:21, Սաղմ. 72:13, 82:3, 113:7, Առակ. 19:17, 21:13, 28:3,8, 29:7,14): Նրանց օգնողները իրականում օգնում են նրանց Աստծուն (տես՝ Հիսուսի քննարկումը վերջին դատաստանի մասին Մատթ. 25:31-46):

Այս տերմինով նկարագրված մարդիկ են՝

1. որբևայրին (տես՝ Ելից 22:22, 2 Օր. 10:18, 24:17-18, 27:19, Սաղմ. 68:5)
2. որբը
3. օտարականը
4. կույրը, կաղը
5. սոցիալապես անգործ՝ տկարը (անհողը)
6. աշխարհի բարիքներից զուրկ մարդը (չունի կյանքի համար անհրաժեշտ բաները՝ սնունդ, տանիք, աշխատանք և այլն)

Ուշադրություն դարձրեք, թե ինչ կարող է անել ՅԱՀՎԵՆ հնազանդ ուխտի հետևորդի համար (աղքատին օգնելը միայն մի բան է, սակայն այստեղ այն խոսում է ամբողջ օրենքի համար):

1. նեղության՝ չար օրում ՅԱՀՎԵՆ կազատի նրան
2. ՅԱՀՎԵՆ կպաշտպանի նրան
3. ՅԱՀՎԵՆ ողջ կպահի նրան
4. նա կկոչվի «երանելի» (MT տալիս է ԱՆԿԱՏԱՐ, սակայն Մագորեթի գիտնականները կարծում են, որ ՎԱՂԱԿԱՏԱՐԸ/իսր/ով ավելի հարմար է. իմաստը չի փոխվում):
5. ՅԱՀՎԵՆ նրան չի մատնի իր թշնամիների ձեռքը
6. ՅԱՀՎԵՆ նրան կպահպանի իր հիվանդության անկողնում
7. ՅԱՀՎԵՆ կնորոգի նրա առողջությունը

Ուշադրություն դարձրեք բոլոր ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԵՐԻՆ, որոնք արտահայտում են Աստծո կողմից մարդու ամբողջ կյանքում շարունակվող գործողությունը:

Միայն մի փոքր գրառում Իմաստասիրական Գրականության մեջ առկա նմանատիպ ընդհանուր հայտարարության վերաբերյալ: Մա չպետք է հասկանալ որպես խոստում, որը ազդում է ամեն մարդու վրա, ամեն ժամանակ, ով օգնում է աղքատին: Մա ընդհանուր հայտարարություն է: Մա ճիշտ է մեծամասամբ, սակայն ոչ ամեն ժամանակ: Մենք ապրում ենք ընկած աշխարհում:

Մա Մատթեոս 7-ի գեղեցիկ լուսաբանում է: Այն թե ինչպես է մարդն ապրում, ինչպես է խոսում, ինչպես է ծախսում իր ռեսուրսները և ժամանակը, հայտնում է այդ մարդու սրտի նվիրման առաջնահերթությունը:

41:2 «երկրի վրա» Եբրայերեն «երկիր» բառը (BDB 75, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՐ, ՀՈՂ, ԵՐԿՐԱԳՈՒԽ) կարող է նշանակել՝

1. դաշտ
2. թաղամաս
3. երկիր
4. շրջան
5. աշխարհ

Միայն համատեքստը կարող է ասել: Ես համոզվել եմ Բեռնարդ Ռամմի կողմից *Գիտության և Մուրք Գրքի վերաբերյալ Բրիտոնենական տեսակետը*, որ Ծննդոց 6-9-ի ջրհեղեղը տեղային էր, քանի որ այդ համատեքստում կիրառվում է այս տերմինը: Տես իմ մեկնաբանությունը Ծննդոց 1-11՝ առցանց www.freebiblecommentary.org

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 41:4-9

⁴Ես ասացի. «ՏԵՐ, ողորմի՛ր ինձ ու բժշկի՛ր իմ անձը,

Քանի որ ես մեղանչել եմ Քո դեմ»:

⁵Թշնամիներս վատ են խոսում իմ մասին՝

Ասելով. «Ե՛րբ է մեռնելու ու անունը կորչի»:

⁶Եվ եթե ինձ այցելության է գալիս, ունայնություն է խոսում.

Նրա սիրտն անօրենություն է հավաքում իր մեջ,

Որպեսզի դուրս գալով ուրիշներին պատմի:

⁷Բոլոր ինձ ատողները միասին փսփսում են իմ դեմ,

Իմ դեմ չարիք են նյութում:

⁸«Չարից մի բան է կապել նրան, -ասում են նրանք,-

Ուու հիմա, որ պառկած է, էլ չի վեր կենա»:

⁹Անգամ իմ մոտիկ բարեկամը, ում վստահում էի,

Ով հասց էր ուտում, իմ դեմ իր կրունկը բարձրացրեց:

41:4-9 Այս պարբերությունների միջև առկա տրամաբանական կապը չի նշվում: Հավանաբար հեղինակը Սաղմ. 41:1-3-ում նկարագրված մարդու պես մեկն էր, սակայն իր կյանքը նեղության և հարձակման մեջ էր ուրիշների պատճառով: Ըստ երևույթին նա գիտակցել էր, որ մեղք էր գործել (Սաղմ. 41:4): Սաղմոսողների Առաջին Գրքի (Սաղմոս 1-41) վերջին սաղմոսներից շատերը նշում են խոստովանություն կամ մեղքի գիտակցում:

Կան մի քանի նշված խնդիրներ՝

1. նա հիվանդ է մարմնով և հոգով
2. նա ունի թշնամիներ, որ գրպարտում են իրեն (Սաղմ. 41:5-7)
3. նրանք չարություն են ծրագրում նրա դեմ (Սաղմ. 41:7-8)
4. նրա թշնամիները ժամանակին եղել են իր մտերիմ ընկերները (Սաղմ. 41:9, տես՝ Սաղմ. 35:11-16, 55:12-13, 20): Սա մեջբերված է Հովհ. 13:18-ում՝ Հիսուսին Հուդայի ուրացման մեջ:

41:7 «միասին փսփսում են» Այս ԲԱՅԸ (BDB 538, KB 527, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ) կարող է կիրառվել անեծքների հմայությունների համար (տես՝ Սաղմ. 58:5, Ժող. 10:11, Եսայի 3:2-3) կամ նրանք կարող են լինել պարզապես մարդիկ, որոնք ցածրաձայն են խոսում, որպեսզի չսսվեն (տես՝ 2 Թագ. 12:19) կամ էլ ցածրաձայն աղոթք (տես՝ Եսայի 26:16):

Եթե այս համատեքստում դա նկատի ունի անեծքը, ապա Սաղմ. 41:8-ը արդյունքն է:

41:8

NASB

NKJV

NRSV

TEV

NJB

REB

«մի չար բան է թափվել իմ վրա»

«չար ախտ է, *ասում են նրանք*, կպել նրան»

«նրանք կարծում են, որ մահացու բան է նրա վրա հասել»

«Նրանք ասում են. «Նա մահացու հիվանդ է»

«մահացու հիվանդություն է նրա վրա հասել»

«չար խոսք է նրա դեմ ասվել, նրանք ասում են»

«Չար» տերմինը (BDB 116) հետագայում դարձավ *Բեղիարի* անունը (այսինքն՝ 2 Օր. 13:13, 2 Կորնթ. 6:15): Այն կիրառվել է մի քանի իմաստներով, լավ օրինակ է տրված 1 Թագ. 1:16, 2:12, 25:17:

Այստեղ կարծես թե իր կիրառությամբ հիվանդությունը անձնավորված է, որը նրանք դիտարկում էին որպես թե ՅԱՀՎԵԻՑ ուղարկված՝ սաղմոսերգուի մեղքի պատճառով (տես՝ Հոբի երեք ընկերները): Սակայն ՅԱՀՎԵԻ գործողությունները նրա հանդեպ Սաղմ. 41:10-12-ում ցույց է տալիս, որ նրանց հայտարարությունները ստեր են՝ բամբասանքներ:

41:9 «Իր կրունկը իմ դեմ բարձրացրեց» Այս մշակութային մերժումի քայլը (նկատեք, որ չկա համագոր հատված) եղել է ընկերական՝ ուխտի ճաշկերությանից հետո (տես՝ Ծննդ. 26:28-30, 31:51-54, Ելից 12:18, 24:5, Սաղմ. 69:22):

Սա հնարավոր է դիտարկել որպես՝

1. ագրեսիայի՝ բռնության քայլ սաղմոսերգուի դեմ (այսինքն՝ ոտքերով հարվածեցին)

2. վիրավորանքի քայլ՝ ժեստի միջոցով: Մերձավոր Արևելքում խիստ մեծ վիրավորանք է, երբ մարդուն ցույց են տալիս կոշիկի տակը: Մերժվելը շատ ավելի ցավոտ էր այդ երկուսի միջև թվացյալ ընկերության պատճառով:

❖ «**իմ մոտիկ բարեկամը**» Սա բառացիորեն «խաղաղության մարդ, որը պարզվեց *Բեղիսարի* որդի էր» (Սաղմ. 41:8ա):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 41:10-12
¹⁰Սակայն Դո՛ւ, ո՛վ ՏԵՐ, գթա՛ր ինձ
Ու վե՛ր բարձրացրու ինձ, որ ես հատուցեմ նրանց:
¹¹Սրանից գիտեմ, որ բարեհաճ ես իմ նկատմամբ,
Որովհետև թշնամիս չի հաղթանակում ինձ:
¹²Իսկ ինձ կպահես իմ անարատության մեջ
Ու ինձ հավիտյան Քո երեսի առջև կկանգնեցնես:

41:10-12 Սաղմ. 41:4-ում երկու խնդրանքներ կային (ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ)

1. ողորմի՛ր ինձ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. բժշկի՛ր իմ անձը (*nephesh*, տես՝ Սաղմ. 3:2-ի և Ծննդ. 35:18-ի գրառումները առցանց տարբերակով) – BDB 950, KB 1272, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այժմ, հաջորդ պարբերության մեջ, կան երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ և մի ԸՂՋԱԿԱՆ՝

1. նույնը ինչ կես 1-ը վերևում, Սաղմ. 41:4
2. բարձրացրո՛ւ ինձ – BDB 877, KB 1086, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (նույն խնդրանքը, ուրիշ, սակայն համազոր մի ԲԱՅ վերը նշված 2-րդ կետից), Սաղմ. 41:4
3. որ հատուցեմ նրանց – BDB 1022, KB 1532, *Piel* ԸՂՋԱԿԱՆ, սաղմոսերգուն ցանկանում է լինել ՅԱՀՎԵԻ արդարության գործիքը

Բժշկությունը կլինի տեսանելի վկայություն, որ ՅԱՀՎԵՆ լսել է և պատասխանել նրա աղոթքները: Սաղմոսերգունը չի ուրախացնում լոկ ՅԱՀՎԵԻ տեսանելի դրսևորումը, այլ՝

1. այն նշան է, որ ՅԱՀՎԵՆ բարեհաճում է (BDB 342, KB 339, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նրա հանդեպ
2. ՅԱՀՎԵՆ բարձրացրել է (BDB 1069, KB 1751, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 63:8) նրա անարատությունը (BDB 1070), որը նշանակում է անմեղություն (տես՝ Սաղմ. 25:21, 101:2, Առակ. 10:9, 19:1, 20:7, 28:6):
3. ՅԱՀՎԵՆ կանգնեցնում է նրան (BDB 662, KB 714, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով) Իր ներկայության մեջ (այսինքն՝ խորանի՝ տաճարի, տես՝ Սաղմ. 16:11, 23:6, 27:4-6) հավիտյան, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*‘OLAM*):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 41:13
¹³Օրհնյա՛լ լինի Իսրայելի ՏԵՐ Աստվածը՝
Հավիտյանս հավիտենից:
Ամեն ու ամեն:

41:13 Սա դրքստրոգիական, պատարագային փակում է (տես՝ Սաղմ. 72:18-19, 89:52, 103:19-22, 106:48, 150:6): Սա հավանաբար բնագրում չի կազմել Սաղմոս 41-ի մասը, այլ որպես Սաղմոսաց Առաջին Գրքի (Սաղմոս 1-41) փակում է՝

1. Սաղմոս 72:18-19 փակում է Գիրք II
2. Սաղմոս 89:52 փակում է Գիրք III
3. Սաղմոս 106:47-48 փակում է Գիրք IV
4. Սաղմոս 150:6 փակում է Գիրք V

❖ «**Ամեն և ամեն**» Տես ստորև տրված Հատուկ Թեմա. Ամեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄԵՆ
SPECIAL TOPIC: AMEN

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» տերմինը ծագել է Եբրայերեն հետևյալ բառերից՝

1. «ճշմարտություն» (*emeth*, BDB 49)
2. «ճշմարտացիություն» (*emun, emunah*, BDB 53)
3. «հավատք» կամ «հավատարմություն»
4. «վստահություն» (*dmn*, BDB 52)

Բ. Այս տերմինի ստուգաբանությունը նշում է մարդու ֆիզիկական կայուն վիճակը: Դրա հակառակը կլիներ անկայունը, սայթաքելին (տես՝ Սաղմ. 35:6, 40:2, 73:18, Երեմիա 23:12) կամ գայթակղիչը (տես՝ Սաղմ. 73:2): Այս բառացի կիրառությունից էլ ձևավորվել է հավատարիմ, վստահելի, ազնիվ և հուսալի բառերի լայնիմաստ փոխաբերությունը (տես՝ Եբր. 2:4):

Գ. Հատուկ կիրառությունը (տես՝ Հատուկ Թեմա. Հավատայ, Վստահել, Հավատք և Հավատարմություն ՀԿ-ում)

1. Սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
2. Վստահություն, Ելից 17:12
3. Կայունություն, Ելից 17:12
4. Հաստատություն, Ես. 33:6
5. Ծշմարիտ, 3 Թագ. 10:6, 17:24, 22:16, Առակ. 12:22
6. Հաստատ, 2 Մնաց. 20:20, Եսայի 7:9
7. Վստահելի (Թորա), Սաղմ. 119:43, 142, 151, 160

Դ. ՀԿ-ում երկու այլ տերմիններ են կիրառվում գործող հավատքի համար՝

1. *batach* (BDB 105), վստահություն
2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես՝ Ծննդ. 22:12)

Ե. Վստահության կամ վստահելիության նշանակությունից ձևավորվեց եկեղեցական կիրառությունը, որը գործածվում էր հաստատելու մեկ ուրիշի ճշմարիտ կամ վստահելի հայտարարությունը (տես՝ Թվոց 5:22, 2 Օր. 27:15-26, 3 Թագ. 1:36, 1 Մնաց. 16:36, Նեեմ. 5:13, 8:6, Սաղմ. 41:13, 72:19, 89:52, 106:48, Երեմ. 11:5, 28:6):

Զ. Այս տերմինի հետ կապված աստվածաբանական բանալին մարդկության հավատարմությունը չէ, այլ ՅԱՀՎԵԻ (տես՝ Ելից 34:6, 2 Օր. 32:4, Սաղմ. 108:4, 115:1, 117:2, 138:2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵԻ և Նրա խոստումների գթառատ, նվիրված, ուխտի հավատարմությունն է: Ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵԻն, պետք է լինեն Նրա նման (տես՝ Ամբ. 2:4): Աստվածաշունչը մարդկության մեջ Իր պատկերը (տես՝ Ծննդ. 1:26-27) վերականգնելու Աստծո պատմությունն ու արձանագրությունն է: Փրկությունը վերականգնում է մարդկության հնարավորությունը Աստծո հետ մտերմիկ հարաբերություն ունենալու: Սա է մեր ստեղծվելու նպատակը:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» բառի ՆԿ-ում ընդունված է կիրառել որպես հայտարարության ճշմարտացիության ամփոփիչ եկեղեցական հաստատում (1 Կորնթ. 14:16, Հայտն. 1:7, 5:14, 7:12):

Բ. ՆԿ-ում այս տերմինը ընդունված է կիրառել որպես աղոթքի փակման բառ (տես՝ Հռոմ. 1:25, 9:5, 11:36, 16:27, Գաղ. 1:5, 6:18, Եփես. 3:21, Փիլ. 4:20, 2 Թեսաղ. 3:18, 1 Տիմ. 1:17, 6:16, 2 Տիմ. 4:18):

Գ. Հիսուսը միակն էր, որ այս տերմինը կիրառեց (կրկնապատիկ անգամ Հովհաննես Ավետարանում՝ 25 անգամ, այսինքն՝ Հովի. 1:51, 3:3, 5, 11, և այլն) ներկայացնելու

կարևորագույն հայտարարությունները (տես՝ Ղուկ.4:24, 12:37, 18:17,29, 21:32, 23:43):

Դ. Այն Հայտն. 3:14-ում կիրառվում է որպես Հիսուսի անուններից մեկը (նաև ուշադրություն դարձրեք 2 Կորնթ. 1:20, հավանաբար ՅԱՀՎԵի անուններից՝ Ես.65:16):

Ե. Հավատարմության կամ հավատքի, վստահելիության կամ վստահության գաղափարն արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմինով, որն անգլերենում թարգմանվում է որպես «վստահություն», «հավատք», «հավատալ» (տես՝ Հատուկ Թեմա. Հավատք, Հավատալ կամ Վստահություն):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտոդության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞ւմ նկատի ունի Սաղմ.41:1:
2. Ինչպե՞ս են մեղքը և հիվանդությունը կապված:
3. Արդյո՞ք Սաղմ.41:7 անդրադառնում է բամբասանքին և գրպարտությանը, թե՞ անեծքներին ու հմայություններին:
4. Ի՞նչ են Սաղմ.41:8-ի «չար բաները»:
5. Ինչպե՞ս է Սաղմ.41:9-ը կիրառվում է ՆԿ-ում:
6. Ստույգ ի՞նչ է հայտարարում սաղմոսերգուն Սաղմ.41:12-ում: Ի՞նչ է նա ուզում:
7. Ինչո՞ւ Սաղմ.41:13-ը Սաղմոսի մաս չի կազմում: